

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԵՄ ՄՈԴԵԼԻ ԱՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԴԵՊՔՈՒՄ

*Վահան Հունանյան**

Ներածություն

Ժամանակակից աշխարհում հակամարտությունների կարգավորման դաշտում կարևոր խաղացող է Եվրոպական միությունը (ԵՄ): ԵՄ-ը բնորոշվում է որպես հաջողված խաղաղության նախագիծ, քանի որ Եվրոպական ազգերի միջև հակամարտությունների կանխարգելումը և կարգավորումը միության ստեղծման հիմքում դրված գաղափարներից մեկն է:

Հակամարտությունների կարգավորումը հռչակված է ԵՄ միասնական արտաքին քաղաքականության հիմնական կետերից մեկը: Դեռևս 1993թ. Եվրոպական ուսումնասիրությունների մասնագետ Ք.Հիլը նշում էր, որ ԵՄ-ը ստանձնելու է «տարածաշրջանային խաղաղարարի» և «հակամարտությունների միջնորդի» գործառույթներ [1, p. 312-313]: ԵՄ-ի մասին պայմանագրի 3-րդ հոդվածում, որտեղ հայտարարվում են միության նպատակները, ամրագրված է. «Միության նպատակն է տարածել խաղաղությունը, իր արժեքները» [2, p. 17]: Իհարկե, այստեղ անհրաժեշտ է նշել, որ ԵՄ հայտարարությունները և ցանկությունները հաճախ կարող են չհամընկնել գործնական քաղաքականության քայլերի հետ, և ինչպես Հիլն է նկատել, ԵՄ-ից

* ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի Եվրոպագիտություն բաժնի մագիստրոս:

սպասումների և իրական կարողությունների միջև զգալի տարբերություն կա:

ԵՄ-ը կարևորում է իր անմիջական հարևանությամբ առկա հակամարտությունների կարգավորումը, քանի որ առաջին հերթին հենց դրանք կարող են սպառնալ եվրոպական անվտանգությանը: Եվրոպական անվտանգության ռազմավարության (ԵԱՌ) համաձայն. «Եվրոպայի շահերից է բխում, որպեսզի մեր սահմանակից երկրները լավ կառավարվեն: Արյունալի հակամարտություններում ներքաշված հարևանները... խնդիրներ են ստեղծում Եվրոպայի համար»¹: Թ. Դիեզի պնդմամբ, հակամարտությունների կարգավորման դաշտում ԵՄ գործունեությունն անխզելիորեն կապված է միության նորմատիվային ուժ լինելու կերպարի հետ, այսինքն՝ ԵՄ-ը փորձում է այլոց վարքագիծը վերափոխել եվրոպական նորմերի և արժեքների տարածման միջոցով [3, p. 614]:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում (ԿԱԵ) կոմունիզմի անկումից հետո առաջացած ուժի վակուումում հավանական հակամարտությունների կանխարգելմանը և արդեն գոյություն ունեցողների կարգավորմանը հասնելու համար ԵՄ-ը որդեգրել է այսպես կոչված «կառուցողական ներգրավվածության» քաղաքականությունը, որը հիմնված է «ժողովրդավարացում-հակամարտությունների կարգավորում» սկզբունքի վրա և որպես հիմնական գործիք է օգտագործում փոխալսման ավորումը: Պետք է նշել, որ ԿԱԵ երկրների էլիտաների և հասարակությունների հիմնական նպատակն էր հնարավորինս մերձենալ ԵՄ-ի հետ և, ի վերջո, անդամակցել միությանը, ինչն անհրաժեշտ նախապայման հանդիսացավ ԵՄ կառուցողական ներգրավվածության հաջողության համար: ԿԱԵ պետությունների ձգտումները հաշվի առնելով՝ ԵՄ-ը նրանց հետ հարաբերությունների

¹ European Council “A Secure Europe in a Better World - The European Security Strategy”. Brussels, 12 December 2003. <http://www.consilium.europa.eu/uedocs/cmsUpload/78367.pdf> (Accessed April 27, 2013)

խորացումը փոխապայմանավորեց ժողովրդավարացման և հակամարտությունների կարգավորման գործընթացների հաջողությամբ: Ժողովրդավարությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը և օրենքի գերակայությունը ԵՄ-ին անդամակցել ցանկացող ԿԱԵ պետությունների համար չափանիշ սահմանվեցին արդեն 1993թ. Կոպենհագենի Եվրոպական խորհրդի արդյունքում (Կոպենհագենյան չափանիշներ), իսկ 1995թ. ԵՄ նախաձեռնությամբ ԿԱԵ երկրները կնքեցին Եվրոպայում կայունության պակտը, որը կարևորում էր ժողովրդավարացումը և պարտավորեցնում էր երկրների միջև հակասությունները և տարածքային խնդիրները լուծել խաղաղ ճանապարհով¹: Միաժամանակ, պետք է նշել, որ ԵՄ-ի համար գործընթացներն ամենևին հարթ չընթացան Արևմտյան Բալկաններում. չնայած 1991թ. ԵՄ խորհրդում նախագահող Լյուքսեմբուրգի արտգործնախարարը հռչակեց, որ եկել է «Եվրոպայի ժամը»², իրականում, ինչպես նշում են հենց եվրոպական քաղաքական գործիչները և փորձագետները, ԵՄ-ը 1992-1995թթ. նախկին Հարավսլավիայի տարածքում պատերազմի և 1998-99թթ. Կոսովոյում հակամարտության ընթացքում չկարողացավ որևէ էական դեր խաղալ, և, ընդհանուր առմամբ, այս ժամանակահատվածում միության իրականացրած քաղաքականությունը տարածաշրջանի նկատմամբ ձախողված կարելի է համարել: Այնուամենայնիվ, հետագայում՝ 2000-ականների սկզբից, իրավիճակի որոշակի կայունացման հետ միասին ԵՄ-ը դարձավ Արևմտյան Բալկաններում կայունության ապահովման հիմնական դերակատարներից մեկը՝ տարածաշրջանի պետությունների հետ կնքելով Հարավարևելյան Եվրոպայի կայունության պակտը³:

¹ Pact on Stability in Europe, The Penguin Companion to European Union, September 2012.

http://penguincompaniontoeu.com/additional_entries/pact-on-stability-in-europe/ (Accessed 11 April, 2013).

² *Riding A.*, “Conflict in Yugoslavia; Europeans send high-level team”. The New York Times, June 29, 1991. <http://www.nytimes.com/1991/06/29/world/conflict-in-yugoslavia-europeans-send-high-level-team.html> (Accessed 12 March, 2013).

³ The Stability Pact for South Eastern Europe. <http://www.stabilitypact.org/> (Accessed 11 April, 2013).

ԵՄ-ն իր կառուցողական ներգրավվածության քաղաքականությունը տարածել է նաև Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) երկրների նկատմամբ: Սակայն, եթե ԿԱԵ երկրներում կայունություն և խաղաղություն հաստատելուն ուղղված միության ջանքերը մեծ մասամբ հաջողությամբ են պսակվել, ապա նույնը տեղի չի ունեցել Հարևանության երկրներում և հատկապես Հարավային Կովկասում: 2003թ. ԵԱՌ ընդունումից և 2004թ. ԵՀՔ մեկնարկից հետո միությունը Հարավային Կովկասի հակամարտությունների կարգավորման գործում ավելի մեծ դերակատարություն ունենալու իր մտադրությունը դարձրեց միանշանակ, սակայն մինչև այժմ ԵՄ-ը չի կարողացել որևէ էական ազդեցություն ունենալ այս հարցում:

2008թ. Հնգօրյա պատերազմից հետո տեղի ունեցած վերադասավորումները հնարավորությունների պատռուկան բացեցին ԵՄ-ի համար՝ ակտիվացնելու իր գործունեությունը, և ԵՄ-ը դարձավ արխագական և հարավօսական հակամարտությունների կարգավորման մեջ ներգրավված դերակատարներից մեկը: Ի տարբերություն վերոնշյալ երկու հակամարտությունների՝ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում ԵՄ մասնակցությունը և դրական ազդեցություն ունենալու կարողությունը եղել և մինչև այժմ էլ մնում են նվազագույնը:

Սույն հոդվածի հիմնական նպատակն է ցույց տալ, որ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում ԵՄ դրական ներդրում ունենալու կարողությունը շատ փոքր է, քանի որ Եվրոպական մոտեցման հիմքում ընկած կառուցողական ներգրավվածությունն այս պարագայում արդյունավետորեն չի գործում, ինչն էլ իր հերթին պայմանավորված է հակամարտության կողմերից մեկի՝ Ադրբեջանի իրական եվրամերձեցման և Եվրոպականացման գործընթաց սկսելու ցանկության բացակայությամբ:

Սկզբում ներկայացնենք ԵՄ կառուցողական ներգրավվածության քաղաքականության էությունը և դրա տարրերն ու բնորոշիչները: Անդրադառնանք Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ ԵՄ դիրքորոշմանը, այնուհետև ցույց տանք այս պարագայում ԵՄ կառուցողական ներգրավվածության քաղաքականության էական սահմանափակումները և բացթողումները, ինչի պատճառով էլ ԵՄ-ը դառնում է անարդյունավետ խաղացող:

Հոդվածի վերջում կանդրադառնանք ԵՄ քաղաքականության շտկման հավանական ուղիներից մեկին:

Հակամարտությունների կարգավորման ԵՄ մոդելը. կառուցողական ներգրավվածություն

Հակամարտությունների կարգավորման ԵՄ մոդելը հասկանալու համար պետք է դիտարկել միության հիմնադիր պայմանագրերը:

ԵՄ-ի մասին պայմանագրում ամրագրված է. «Միության գործունեությունը միջազգային ասպարեզում պետք է առաջնորդվի այն սկզբունքներով, որոնք ոգեշնչել են նրա ստեղծումը, զարգացումը և ընդլայնումը» [2, ք. 28]: Ըստ հիմնադիր պայմանագրերի՝ այդ սկզբունքներն են ժողովրդավարությունը, մարդու իրավունքները, օրենքի գերակայությունը, ՄԱԿ կանոնադրության և միջազգային իրավունքի սկզբունքների նկատմամբ հարգանքը [2, ք. 28]: Հիմնադիր պայմանագրերը նաև ամրագրում են, որ միությունը պիտի վարի այնպիսի արտաքին քաղաքականություն, որ «պահպանի խաղաղությունը, կանխարգելի հակամարտությունները և ամրապնդի միջազգային անվտանգությունը» [2, ք. 29]: Իտալացի հեղինակավոր հետազոտող Ն.Տոչիի գնահատմամբ՝ այս դրույթների սինթեզը հենց արտացոլում է ԵՄ-ին բնորոշ մոտեցումը հակամարտությունների կարգավորմանը. ուղղակիորեն կապ է ստեղծվում ժողովրդավարության, մարդու իրավունքների, օրենքի գերակայության և տարածաշրջանա-

յին համագործակցության միջև՝ մի կողմից և հակամարտությունների կանխարգելման և կարգավորման միջև՝ մյուս կողմից¹: Առաջինները միության կողմից դիտվում են երկրորդներին հասնելու համար անհրաժեշտ նախապայմաններ: Մեր կարծիքով, ավելի լայն մեկնաբանության դեպքում ԵՄ-ի կողմից վերոնշյալ արժեքների խրախուսումը և տարածումը կարելի է դիտել «ժողովրդավարական խաղաղության» տեսությանը համահունչ, որի համաձայն՝ ժողովրդավարական պետություններն իրենց փոխհարաբերություններում առկա խնդիրները լուծելիս չեն դիմում ռազմական ուժի և խաղաղ միջոցներով են լուծում իրենց հակասությունները [4, p. 73]:

Այսպիսով, կարող ենք ամրագրել, որ ԵՄ մոտեցման հիմքում ընկած է ժողովրդավարացում-հակամարտությունների կարգավորում սկզբունքը: Այս սկզբունքն իր արտահայտումն է գտել կառուցողական ներգրավվածության քաղաքականության մեջ, որի օգնությամբ ԵՄ-ը ձգտում է լուծումներ տալ իր հարևանությամբ առկա հակամարտություններին:

Կառուցողական ներգրավվածությունը դիվանագիտական, տնտեսական, սոցիալական, մշակութային և ռազմական համագործակցության միջոցառումների և ծրագրերի իրականացումն է, որոնք արտացոլվում են երրորդ պետությունների հետ կնքված երկարաժամկետ պայմանագրերում, և որոնց արդյունքում ԵՄ-ի և երրորդ երկրի միջև ձևավորվում են քաղաքական, իրավական, սոցիալական և տնտեսական ինտեգրման տարբեր աստիճաններ՝ կախված պայմանագրային հարաբերությունների խորությունից: Ստեղծվող պայմանագրային հարաբերությունների ցանցը երրորդ պետությունում հետզհետե տարածում է ԵՄ արժեքները և խաղի կանոնները: Արդյունքում՝ կառուցվածքային փոփոխություններ բերելով թե՛ երրորդ պետություններում, թե՛ երրորդ պետությունների միջև հարաբերու-

¹ *Tocci N.*, “The EU in Conflict Resolution”. Specialist Group on Ethnopolitics, p. 2. <http://www.ethnopolitics.org/isa/Tocci.pdf> (Accessed March 12, 2013).

թյուններում՝ ԵՄ-ն անհրաժեշտ նախապայմաններ է ստեղծում հակամարտությունների կանխարգելման և կարգավորման համար [5, p. 18]: Իհարկե, կառուցվածքային փոփոխությունները զգալի ժամանակ են պահանջում, և հասկանալի է, որ ԵՄ նմանատիպ մոտեցումը հակամարտությունների կարգավորմանը արդյունքներ կարող է տալ միայն երկարաժամկետ հեռանկարում:

Կառուցողական ներգրավվածության քաղաքականությունն իրականացնելու համար ԵՄ-ն օգտագործում է իր առավել կարողունակ գործիքը՝ փոխապայմանավորումը: ԵՄ-ը գործընկեր պետություններին տնտեսական, ֆինանսական և այլ բնույթի աջակցության տրամադրումը, հարաբերությունների հետագա խորացումը փոխապայմանավորում է իրեն անհրաժեշտ բարեփոխումների և պայմանների կատարմամբ: Ընդ որում, բացի ժողովրդավարացման հետ կապված պայմաններից, ԵՄ-երրորդ պետություն պայմանագրերում կարող են ամրագրվել նաև հակամարտությունների կարգավորման հետ ուղղակիորեն կապված գործողությունները:

Փոխապայմանավորման գործիքն առավել ազդեցիկ է եղել ԵՄ ընդարձակման գործընթացի համատեքստում, երբ ԿԱԵ երկրներին առաջարկվում էր Կոպենհագենյան չափանիշներին համապատասխան անհրաժեշտ բարեփոխումները կատարելու դեպքում ստանալ ամենամեծ «պարգևը», որը կարող է տրամադրել միությունը՝ անդամակցություն ԵՄ-ին:

Փոխապայմանավորումը կարող է լինել թե՛ դրական, թե՛ բացասական բնույթի: Այսինքն՝ պայմանի իրականացման դեպքում տրամադրվում են առավելություններ և առանձնաշնորհումներ, իսկ չկատարման դեպքում արդեն առկա առանձնաշնորհումները կասեցվում են և/կամ մտցվում են պատժամիջոցներ: Նաև, ինչպես նշում է ոլորտի հետազոտող Շեդելմայերը, փոխապայմանավորումը պետք է վստահելի լինի. երրորդ կողմը պետք է համոզված լինի, որ կատանա իր պարգևը՝

պարտավորվածությունները կատարելու դեպքում և, միաժամանակ, համոզված լինի, որ պարզևը կստանա միայն պարտավորվածություններն ամբողջովին կատարելու դեպքում: Ընդ որում, եթե որևէ երկիր շարունակում է ստանալ պարզևատրումը, չնայած ամբողջովին չի կատարել պարտավորվածությունները, դա մեծապես կասկածի տակ է դնում փոխպայմանավորման վստահելիությունը¹:

Դրական և բացասական փոխպայմանավորումը հաճախ է օգտագործվում նաև այլ միջնորդների կողմից, սակայն ԵՄ առավելությունն այն է, որ ի տարբերություն այլ ակտորների՝ ավելի մեծ հնարավորություններ ունի և կարող է առաջարկել օգուտների և վնասների շատ ավելի լայն ու բազմազան փունջ: Ինչպես նշում է Տոչին, եթե պետությունների, միջազգային կազմակերպությունների և այլ ակտորների դեպքում փոխպայմանավորման օգուտները սովորաբար ներառում են ֆինանսական օգնություն, առևտրային առանձնաշնորհումներ, ներդրումներ, անվտանգության երաշխիքներ, ճանաչում և անդամակցություն միջազգային կազմակերպությանը, ապա ԵՄ դեպքում դրանք ներառում են առևտրային առավելությունների շնորհում, անդամակցություն մաքսային միության և միասնական շուկայի տարբեր ասպեկտներին, ֆինանսական և տեխնիկական աջակցություն, համագործակցություն գիտակրթական, տեխնոլոգիաների, էներգետիկայի, ենթակառուցվածքների ոլորտներում, քաղաքական երկխոսության ինստիտուցիոնալացված ձևեր, ներառում ԵՄ ծրագրերում², ինչպես նաև անդամակցություն միությանը:

ԵՄ-ն առավել լայնորեն օգտագործում է փոխպայմանավորումն իր հարևանությամբ գտնվող երկրների հետ հարաբերությունները կառուցելիս, և սկզբունքորեն կարելի է առանձնացնել երեք տիպի

¹ *Sedelmeier U.*, “Europeanisation in new member and candidate states”. *Living Reviews in European Governance*, Vol. 6, No. 1, 2011, p.12. <http://www.livingreviews.org/lreg-2011-1> (Accessed 15 April 2013).

² *Tocci N.*, “The EU in Conflict Resolution”, *op. cit.*, p. 8-9.

ձևաչափեր, որտեղ հիմնարար դեր է խաղում այս գործիքը՝ ընդլայնման գործընթաց, կայունացման և ասոցիացման գործընթաց¹ և ԵՀՔ: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ ի տարբերություն ընդլայնման ու կայունացման և ասոցիացման գործընթացի, որոնց դեպքում փոխապայմանավորումը գործում է իր «ամբողջ ուժով»՝ այս գործիքի ազդեցության աստիճանը զգալիորեն թուլացված է ԵՀՔ դեպքում, որի շրջանակներում չնայած առաջարկվում է ԵՄ-ի հետ քաղաքական ասոցիացում և տնտեսական ինտեգրում, փաստացիորեն առկա չէ ԵՄ-ին անդամակցության հեռանկարը: Հավելենք նաև, որ չնայած վերոնշյալ երեք ձևաչափերում առկա են թե՛ ժողովրդավարացմանը, թե՛ հակամարտությունների կարգավորմանն ուղղակիորեն վերաբերող պայմաններ, ԵՀՔ երկրների դեպքում ԵՄ-ը հիմնական շեշտը դնում է ժողովրդավարացման վրա, իսկ հակամարտությունների կարգավորման հետ ուղղակիորեն կապված կետերն ավելի շատ հոչակագրային բնույթ են կրում:

Այսպիսով, ԵՄ մոտեցումը հակամարտությունների կարգավորմանը հիմնվում է երեք փոխկախված սյուների վրա՝ կառուցողական ներգրավվածության քաղաքականություն, ժողովրդավարացում-հակամարտությունների կարգավորման սկզբունք և փոխապայմանավորման գործիք: Այս երեքի միջև գործում է հետևյալ կապը. կառուցողական ներգրավվածության քաղաքականության հիմնական սկզբունքը ժողովրդավարացում-հակամարտությունների կարգավորումն է, իսկ կառուցողական ներգրավվածության նպատակներին հասնելու հիմնական գործիքն է փոխապայմանավորումը:

¹ Կայունացման և ասոցիացման գործընթացն Արևմտյան Բալկանների նկատմամբ ԵՄ քաղաքականությունն է: Տե՛ս European Commission - Enlargement - Stabilisation and Association Process. http://ec.europa.eu/enlargement/policy/glossary/terms/sap_en.htm (Accessed 19 March, 2013).

Կառուցողական ներգրավվածության անարդյունավետությունը և ԵՄ քաղաքականության շտկման ուղին

Ղարաբաղյան հիմնախնդիրը սկսեց «հետաքրքրել» ԵՄ-ին արևելյան ընդարձակումից հետո, երբ միության սահմաններն ընդհուպ մոտեցան Հարավային Կովկասին, և զգալիորեն ընդլայնվեց այս կառույցի ներգրավվածությունը տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման մեջ: Այսօր արդեն տարբեր մակարդակներում քննարկումներ են ընթանում Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ԵՄ ներգրավվածության և այն մասին, թե որը կարող է լինել ԵՄ «ավելացրած արժեքն» այս խնդրում:

Փորձագիտական դաշտում որոշ վերլուծաբանների կողմից առաջարկվել էր այն գաղափարը, թե ԵՄ-ը կարող է փոխարինել Ֆրանսիային ԵԱՀԿ Մինսկի խմբի (ՄԽ) համանախագահությունում կամ ընդհանրապես փոխել ԵԱՀԿ ՄԽ ձևաչափը: Իրականում, ԵՄ-ը չի պատրաստվում և չի էլ ձգտում որևէ կերպ փոխարինել կամ փոփոխել ԵԱՀԿ ՄԽ միջնորդությամբ անցկացվող բանակցությունների ձևաչափը, ինչի մասին բազմիցս հայտարարել են ԵՄ բարձրաստիճան պաշտոնյաները¹: Նշենք նաև, որ ԵՄ դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության հանդեպ հավասարակշռված է, և ի տարբերություն Մերձդնեստրի, Աբխազիայի և Հվ. Օսիայի, որտեղ միությունը գրեթե միանշանակ աջակցում է Մոլդովային և Վրաստանին, Լեռնային Ղարաբաղի դեպքում ԵՄ-ն աջակցում է ԵԱՀԿ ՄԽ ջանքերին՝ Մադրիդյան սկզբունքների հիման վրա հակամարտության խաղաղ լուծումը գտնելու համար: Հաշվի առնելով, որ Մադրիդյան սկզբունքներն ամրագրում են Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը, կարող ենք պնդել, որ ԵՄ-ն աջակցում է Արցախի ինքնորոշմանը: Պաշտոնական Բաքուն բազմաթիվ անգամ դժգոհել է այս

¹ Տե՛ս, օրինակ՝ ԵՄ արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնի բացառիկ հարցազրույցը Մեդիամաքսին, 16 նոյեմբերի 2011: <http://www.mediamax.am/am/news/interviews/3163/> (մուտք՝ ապրիլի 15, 2013):

առումով՝ պահանջելով ԵՄ-ից նույնատիպ վերաբերմունք, ինչպիսին Վրաստանի կամ Մոլդովայի նկատմամբ է, սակայն միությունը ևս մեկ անգամ վերահաստատեց իր վերոնշյալ մոտեցումը 2012թ. փետրվարի 27-ի ԵՄ Արտաքին հարաբերությունների խորհրդի ընդունած Հարավային Կովկասի մասին եզրակացություններում:

ԵՄ-ը բազմիցս է հայտարարել վստահության կառուցման և հետհակամարտային վերականգնման միջոցների օգնությամբ ԵԱՀԿ ՄԽ համանախագահների ջանքերին աջակցելու մասին: Չնայած ԵՄ ներգրավվածությունը Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հետ կապված հարցերում ցածր է եղել, վերջին շրջանում ԵՄ մասնակցությունը մեծացել է՝ հետևելով այսպես կոչված «ներգրավվածություն առանց ճանաչման» քաղաքականությանը:

Տարիներ շարունակ ԵՄ-ը խուսափում էր Լեռնային Ղարաբաղի հետ բարձրամակարդակ կապեր հաստատելուց՝ չցանկանալով հարուցել պաշտոնական Բաքվի դժգոհությունը: Բավական է հիշել 2006թ. ԵՄ հատուկ ներկայացուցիչ Փ.Սեմնեբիի այցի փորձը Լեռնային Ղարաբաղ. նա ճանապարհի կեսից ընդհատեց այցը և հետգնաց ադրբեջանական կողմի բողոքների պատճառով¹: Սակայն վերջին շրջանի զարգացումները ցույց են տալիս, որ ԵՄ քաղաքականությունն այս ուղղությամբ փոխվում է, և կարելի է ակնկալել ավելի բարձր մակարդակի փոխհամագործակցություն ԵՄ-ի և Լեռնային Ղարաբաղի միջև: Մասնավորապես, այս առումով ամենակարևոր զարգացումը ԵՄ Արտաքին հարաբերությունների խորհրդի արդեն նշված եզրակացություններն էին Հարավային Կովկասի վերաբերյալ, որտեղ ընդգծվեց «...ԵՄ ներկայացուցիչների անխոչընդոտ մուտքի անհրաժեշտությունը Լեռնային Ղարաբաղ և շրջակա շրջաններ»²:

¹ “Peter Semneby still planning to visit Karabakh”. ArmTown, 15 November 2007. <http://www.armtown.com/news/en/pan/20071115/24089/> (Accessed 18 May 2013).

² Council of the European Union, “Council conclusions on the South Caucasus”. Brussels, 27 February 2012. http://www.consilium.europa.eu/uedocs/cms_data/docs/pressdata/EN/foraff/128197.pdf (Accessed June 14, 2013).

Այս մոտեցումը վերահաստատեց Եվրոպական խորհրդի նախագահ Հերման վան Ռոմպոյը Հայաստան կատարած իր այցի ընթացքում¹: ԵՄ այս նոր մոտեցման լիարժեք կիրառումը զգալի նշանակություն կունենա Ադրբեջանի կողմից տարվող Լեռնային Ղարաբաղի մեկուսացման քաղաքականությունը հաղթահարելու համար:

Ավելին, համապատասխան քաղաքական կամք ցուցաբերելու դեպքում ԵՄ դերը կարող է նաև կարևոր լինել զինադադարի ռեժիմն ամրապնդելու գործում: Ինչպես հայտնի է, դեռևս 2011թ. Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև համաձայնություն էր ձեռք բերվել ԵԱՀԿ հովանու ներքո շփման գծում միջադեպերը հետաքննելու մեխանիզմներ ստեղծելու ուղղությամբ, ինչը, սակայն, այդպես էլ կյանքի չկոչվեց Ադրբեջանի դիրքորոշման պատճառով, որն այդ մեխանիզմի ընդունումն արգելափակելու համար նույնիսկ սպառնացել էր վետո կիրառել ԵԱՀԿ բյուջեի վրա²: Այս պարագայում ԵՄ-ը կարող է իր Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության շրջանակներում քաղաքացիական դիտորդական առաքելություն անցկացնել Վրաստանում իրականացվող Մշտադիտարկման առաքելության համանմանությամբ և տրամաբանությամբ՝ այդպիսով նպաստելով հրադադարի ռեժիմի ամրապնդմանը և կանխարգելելով շփման գծում Ադրբեջանի կողմից սադրանքների իրականացումը և «պատահական» պատերազմի սկսումը: Քաղաքացիական դիտորդական առաքելության իրականացումը հենց ԵՄ շահերից է բխում, քանի որ իրավիճակի սրումը կամ պատերազմի վերսկսումը վնաս կհասցնի միությանը, և, բացի այդ, այն առավել լուրջ քայլ կլինի ԵՄ-ի կողմից, որի միջոցով կառույցը բոլոր կողմերին ցույց կտա, որ

¹ Եվրոպական խորհրդի նախագահ Հերման վան Ռոմպոյի ելույթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում, 11 հուլիս, 2012: http://eeas.europa.eu/delegations/armenia/press_corner/all_news/news/2012/2012_04_07_hy.htm (մուտք՝ 15 հունիսի 2013թ.):

² Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար, Ն.գ. պրն Էդվարդ Նալբանդյանի ելույթը ԵԱՀԿ նախարարական խորհրդի 19-րդ հանդիպմանը, 06 դեկտեմբերի 2012: http://www.mfa.am/hy/speeches/item/2012/12/06/osce2012_dub_min_sp/ (մուտք՝ 15 հունիսի 2013թ.):

նվիրված է տարածաշրջանում խաղաղության պահպանմանը: Նմանատիպ առաքելության իրականացումը կբխի նաև այլ հիմնական խաղացողների՝ ԱՄՆ և Ռուսաստանի շահերից. չզինված փոքրաքանակ քաղաքացիական առաքելությունը մտահոգությունների տեղիք չի տա, մյուս կողմից՝ նրա առկայությունը բավական լուրջ ներդրում կլինի պատերազմի կանխարգելման համար, ինչու՞մ մեծապես շահագրգռված են ԱՄՆ-ը և Ռուսաստանը:

Չնայած վերոնշյալ կարևոր զարգացումներին՝ այնուամենայնիվ, կարծում ենք, որ տեսանելի ապագայում ԵՄ-ը կշարունակի մնալ երկրորդական խաղացող, և Ղարաբաղյան հակամարտության մեջ ինչ-որ բան փոխելու նրա կարողությունը մնալու է սահմանափակ: Ինչո՞ւ:

Հակամարտությունների կարգավորման հարցում ԵՄ-ը հիմնվում է «փափուկ» և երկարաժամկետ մեթոդների, մասնավորապես՝ կառուցողական ներգրավվածության վրա, որի միջոցով հասնում է հակամարտող հասարակությունների ժողովրդավարացման և արդիականացման՝ այն հաշվարկով, որ կառուցվածքային փոփոխությունները համապատասխան միջավայր և պայմաններ կստեղծեն հակամարտության կարգավորման համար: Օգտագործելով ժողովրդավարացում-հակամարտությունների կարգավորում սինթեզը՝ ԵՄ-ը հատկապես ԿԱԵ երկրներում կարողացել է դրական արդյունք ստանալ: Սակայն Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման դեպքում այս մոդելն ունի մի սկզբունքային սահմանափակում:

Իրականությունն այն է, որ ի տարբերություն Հայաստանի, որը հսկայական առաջընթաց է գրանցել ԵՄ-ի հետ մերձեցման և եվրոպականացման ճանապարհին և այժմ համարվում է Արևելյան գործընկերության առաջատարներից մեկը, և Լեռնային Ղարաբաղի, որը շարունակաբար հաջողություններ է գրանցում ժողովրդավարական սկզբունքների հիման վրա պետականության կառուցման գոր-

ծում, հակամարտության կողմերից Ադրբեջանն այսօր քիչ է հետաքրքրված ԵՄ-ի հետ մերձեցմամբ և հատկապես դրանից բխող ժողովրդավարացման գործընթացներով: Նման պայմաններում փոխապայմանավորումը, որի միջոցով ԵՄ-ը տարածում է իր արժեքներն ու նորմերը, ընդհանրապես կորցնում է ուժը:

Պետք է նշել, որ ԵՀՔ շրջանակներում փոխապայմանավորման «կարողությունները» մի մակարդակ ավելի ցածր են, քան ընդլայնման և ասոցիացման ու կայունացման գործընթացներում, քանի որ բացակայում է ԵՄ անդամակցության հեռանկարը: Սակայն նույնիսկ եթե անդամակցության հեռանկարը տրամադրվեր, դա չէր փոխի իրերի դրությունը, քանի որ փոխապայմանավորման տրամաբանությունը հիմնված է այն գաղափարի վրա, որ տվյալ պետությունը շահագրգռված է ԵՄ-ի հետ մերձեցմամբ և ԵՄ-ի կողմից տրվող օգուտներով, մինչդեռ Ադրբեջանի համար դրանք կարևորություն չեն ներկայացնում: Օրինակ, ԵՄ-ին հաջողվեց այս տարվա ապրիլին հասնել Սերբիայի և Կոսովոյի միջև հարաբերությունների կարգավորման մասին համաձայնագրի կնքմանը՝ օգտագործելով փոխապայմանավորումը, քանի որ Սերբիան մտադրված էր խորացնել եվրախնտեզրումը, ինչը հնարավոր էր անել միայն Կոսովոյի հետ համաձայնության գալու միջոցով: Համաձայնագրի կնքումից անմիջապես հետո Եվրահանձնաժողովը կանաչ լույս վառեց ԵՄ-ին Սերբիայի անդամակցության բանակցություններ սկսելու համար¹: Ի տարբերություն այս օրինակի՝ ներկա դրությամբ ԵՄ-ն Ադրբեջանի վրա ազդելու լուրջ լծակ չունի հակամարտության կարգավորման համար անհրաժեշտ ժողովրդավարացման գործընթաց սկսելու համար, քանի որ վերջինիս կառավարող վերնախավը հետաքրքրված չէ եվրամերձեցմամբ:

¹ «Commission gives green light to Serbia accession talks». EUobserver.com, 22 April 2013. <http://euobserver.com/tickers/119884> (Accessed 30 May, 2013).

Փաստորեն, պաշտոնական Բաքուն ԵՄ-ի հետ հարաբերությունները դիտարկում է ոչ թե որպես ժողովրդավարացման և ԵՄ ներքին շուկայի հետ ինտեգրման միջոց, այլ էներգակիրների վաճառքի միջոցով տնտեսական շահույթ ստանալու և բազմավեկտոր արտաքին քաղաքականություն իրականացնելու տեսանկյունից:

Նշենք նաև, որ ԵՄ-ի կողմից առաջարկվող ֆինանսական օգուտները կարևոր չեն Ադրբեջանի համար: Օրինակ, 2012թ. ամբողջ տարվա սոցիալ-տնտեսական բարեփոխումների համար ԵՄ-ն Ադրբեջանին տրամադրել է 31 մլն եվրո, մինչդեռ այդ երկիրն օրական միայն նավթից ստանում է գրեթե 43 մլն եվրո¹:

Ներկայումս Ադրբեջանն անտեսում է ԵՄ-ի հետ ստորագրած փաստաթղթերը և ստանձնած պարտավորությունները²՝ միության հետ համագործակցելով միայն այն ոլորտներում, որոնք իրեն են հարմար: Վերջին տարիների ընթացքում պաշտոնական Բաքուն ԵՄ-ի հետ հարաբերություններում իրեն չափազանց ինքնավստահ է զգում և «չի վախենում» իր գործողություններով եվրոպացիների հակազդեցությունն առաջացնելուց: ԵՄ պաշտոնյաները տարբեր առիթներով դատապարտում են Ադրբեջանում ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության ցածր մակարդակը, սակայն դա շատ փոքր ազդեցություն է ունենում: Հատկանշական է, որ երբ այս տարվա փետրվարին Ադրբեջանում ընդդիմադիր գործիչներ Մամադովին և Յաքուբլուին ձերբակալելուց հետո ԵՄ բարձր ներկայացուցիչը և Ընդլայնման ու հարևանության քաղաքականության հանձնակատարը հայտարարություն տարածեցին՝ քննադատելով ադրբեջանական իշխանություններին, ի պատասխան Իլիամ Ալիևն իր ելույթում նշեց, որ Ադրբեջանը որևէ պարտավորվածություն չունի

¹ Kobzova J., Alieva L., "The EU and Azerbaijan: Beyond Oil". European Council on Foreign Relations, May 2012, p.5. http://ecfr.eu/page/-/ECFR57_EU_AZERBAIJAN_MEMO_AW.pdf (Accessed June 3, 2013).

² Մասնավորապես, Գործընկերության և համագործակցության համաձայնագրի և ԵՀՔ շրջանակներում ստանձնած պարտավորությունները:

այն կառույցների հանդեպ, որոնց անդամ չի հանդիսանում, և նրանք իրավունք չունեն Ադրբեջանին դիտողություն անել¹:

Իրականում, Ադրբեջանին խորթ են եվրոպական արժեքները, և երկիրը ոչնչով չի տարբերվում արևելյան բռնատիրական պետություններից: Գրեթե ամեն շաբաթ հեղինակավոր միջազգային լրատվամիջոցներում ռեպորտաժներ են հրապարակվում երկրում տեղի ունեցող մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների աղաղակող խախտումների, այլախոհության ճնշման, կառավարող էլիտայի խոր կոռումպացվածության մասին: Համատարած է հայատյացության և ռասիզմի մթնոլորտը: Ինչպես Եվրոպայի խորհրդի Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովն է նշում իր զեկույցում, «Հայաստանի Հանրապետության վերաբերյալ մշտական բնույթ կրող բացասական պաշտոնական և մեդիա դիսկուրսն օգնում է պահպանել հայկական ծագում ունեցող մարդկանց վերաբերյալ բացասական վերաբերմունքը»²: Ադրբեջանում տիրող այլատյացության մթնոլորտի վերջին, ամենավառ դրսևորումներն էին մարդասպան Սաֆարովի հերոսացումը և հայտնի գրող Այլիսլիի հալածանքները: Ի վերջո, Ադրբեջանը մեծ տեմպերով զինվում է, ինչի արդյունքում դարձել է աշխարհի ամենառագմականացված երկրներից մեկը³, իսկ պաշտոնյաների ելույթներից անպակաս է ռազմական հռետորաբանությունը: Տեղին է հիշել, թե ինչ արդյունք ունեցավ Եվրոպայի համար միլիտարիզմի, ռասիզմի և այլատյացության նմանատիպ համակցությունը ֆաշիստական Գերմանիայում, ինչպես նաև այն, որ եվրոպական նախագիծն ասպարեզ իջավ ազգերի միջև խաղաղությունը, հանդուրժողականությունը և երկխոսությունը պահպանելու համար:

¹ *Mamedov E.*, “Azerbaijan and the EU: Recalibrating Relations?”. EurasiaNet.org, February 27, 2013. <http://ru.president.az/articles/7340> (Accessed 20 April 2013).

² ECRI report on Azerbaijan, CRI(2011)19, 31 May, 2011. <http://www.coe.int/t/dghl/monitoring/ecri/country-by-country/azerbaijan/AZE-CbC-IV-2011-019-ENG.pdf> (Accessed 20 April 2013).

³ Global Militarization Index (GMI) 2012. http://www.bicc.de/fileadmin/Dateien/pdf/press/2012/Update_GMI_2012_Fact_Sheet_e_neu.pdf (Accessed 20 April 2013).

Առայժմ Ադրբեջանը կարողանում է այս ամենը մարսել: ԵՄ-ը հիմնականում աչք է փակում Ադրբեջանի «մեղքերի» վրա՝ էներգետիկ անվտանգության ապահովման գործում և ԵՄ-ի կողմից կարևորվող Հարավային գազային միջանցքի ծրագրում երկրի ունեցած դերի պատճառով: Սակայն նմանատիպ ծայրահեղ «ռեալիստիկ» մոտեցումը խաթարում է ԵՄ «նորմատիվ ուժ» լինելու իրողությունը և ԵՄ հեղինակությունն աշխարհում: ԵՄ-Ադրբեջան հարաբերություններն այսօր համեմատելի են մինչև արաբական գարունը միության և Եգիպտոսի կամ միության և Թունիսի միջև հարաբերությունների հետ՝ որոշակի ոլորտներում շահերի հիման վրա համագործակցություն՝ առանց եվրոպական արժեքների և նորմերի ընդունման պայմանի: Մինչդեռ ԵՀԶ-ն, որը ԵՄ և Ադրբեջանի հարաբերությունների հիմնական շրջանակն է հանդիսանում, սկզբունքորեն եվրոպական նորմերի տարածման գործընթաց է¹. Ինչպես ԵՀԶ արևելյան չափման՝ Արևելյան գործընկերության Վարշավայի գազաթափոցի հռչակագրում է ամրագրված՝ «Արևելյան գործընկերությունը հիմնված է ազատության, ժողովրդավարության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության, օրենքի գերակայության սկզբունքների և արժեհամակարգի վրա»²: Եվս մեկ անգամ շեշտենք, որ ԵՄ թե՛ հիմնադիր պայմանագրերում, թե՛ այլ փաստաթղթերում մարդու իրավունքները և ժողովրդավարությունը հռչակված են որպես արտաքին քաղաքականության անկյունաքար, և միությունը հաճախ է հայտարարել, որ երրորդ պետությունների հետ հարաբերություններում այդ արժեքները դրված են հարաբերությունների հիմքում: Օրինակ, 2011թ. ընդունված «Մարդու իրավունքները և ժողովրդավարությունը ԵՄ արտաքին գործունեու-

¹ *Steglich R.*, "The EU as a Normative Power and Conflict Transformation in Moldova: A "Force for Good"?" *Journal of Contemporary European Research*. Vol.8, No.1, 2012. p. 79.

<http://www.jcer.net/ojs/index.php/jcer/article/view/312/319> (Accessed 10 May 2013).

² Joint Declaration of the Eastern Partnership Summit, Warsaw, 29-30 September 2011.

http://www.eap-csf.eu/assets/files/Documents/Joint_Declaration_Warsaw_Summit.pdf (Accessed 10 May 2013).

թյան կենտրոնում. դեպի ավելի արդյունավետ մոտեցում» հաղորդագրության մեջ հանձնաժողովը և բարձր ներկայացուցիչը շեշտում են, որ մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը ԵՄ արտաքին հարաբերությունների մեջ «կարմիր գծի» նման պիտի անցնեն¹: Այս պարագայում Ադրբեջանի կամայական վարքագիծը և երկրում խորացող ավտորիտարիզմը՝ մի կողմից և ԵՄ համապատասխան արձագանքի բացակայությունը՝ մյուս կողմից, կասկածի տակ են դնում ԵՀՔ հիմքում դրված գաղափարի կենսունակությունը մասնավորապես և ԵՄ արտաքին քաղաքականության վստահելիությունն ու հետևողականությունն ընդհանրապես:

Այս պարագայում ի՞նչ կարող է անել միությունն իրերի դրությունը շտկելու ուղղությամբ:

Հարևանության երկրների շրջանում իր քաղաքականությունը բարեփոխելու համար վերջերս ԵՄ-ը մի շարք քայլեր է ձեռնարկել, որոնց թվում միությունը փորձում է ամրապնդել փոխապայմանավորման գործիքը՝ «ավելին ավելի դիմաց» (*more for more*) սկզբունքը ԵՀՔ-ի մեջ ներդնելով, համաձայն որի՝ այն երկրները, որոնք կիրականացնեն ավելի շատ ժողովրդավարական բարեփոխումներ, կստանան ավելի շատ առավելություններ և ֆինանսավորում²: Սակայն «ավելին ավելի դիմաց» սկզբունքը հազիվ թե որևէ ազդեցություն ունենա նավթադուլարների վրա «նստած» Ադրբեջանի կառավարող ընտրանու համար. ԵՄ տրամադրած ֆինանսների՝ Ադրբեջանի համար ունեցած կարևորության մասին հետազոտողներից մեկը նշել է. «...եթե դուք ասեք Ադրբեջանին, որ պատրաստվում եք կանգնեցնել (եվրոպական) փողերի հոսքը, նրանք պարզապես կծիծաղեն ձեզ վրա»³:

¹ European Commission and High Representative of the European Union for Foreign Affairs and Security Policy “Human Rights and Democracy at the heart of EU external action – towards a more effective approach”. Brussels, 12 December 2011, p. 7. <http://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:2011:0886:FIN:EN:PDF> (Accessed 18 March 2013).

² European Commission and the High Representative of the Union for Foreign Affairs and Security Policy, “A new response to a changing Neighbourhood”. Brussels, 25 May 2011. http://ec.europa.eu/world/enp/pdf/com_11_303_en.pdf (Accessed 12 March 2013).

³ Vogel T. “A reflection on old, failed neighbourhood policies”. European Voice, 26 May 2011.

Այստեղ, թերևս, ԵՄ-ի կողմից մեկ այլ մոտեցում պիտի ցուցաբերվի՝ «քիչը քչի դիմաց» (*less for less*): Եվրահանձնաժողովն իր «ԵՄ դերը երրորդ երկրներում մարդու իրավունքների և ժողովրդավարության խթանման մեջ» հաղորդագրությունում նշում է, որ երկրները, որոնք ներգրավված են ԵՄ-ի հետ պայմանագրային հարաբերություններում, կարող են իրական հանձնառություն չցուցաբերել և չկատարել այս հարցերում իրենց պարտավորությունները, ինչի դեպքում ԵՄ-ի կողմից «բացասական միջոցների կիրառումը կարող է ավելի տեղին լինել»¹: Իրականում, կարծում ենք, միակ միջոցը, որն օգտագործելով ԵՄ-ն այսօր կարող է ամրապնդել իր արտաքին քաղաքականության հեղինակությունն ու վստահելիությունը և «կարգի հրավիրել» Ադրբեյջանին, կլինի բացասական փոխպայմանավորում կիրառելը, որը կարող է ներառել, օրինակ, համագործակցության ծրագրերի հետաձգում, բարձրաստիճան կապերի սառեցում և այլն, իսկ եթե դա էլ ազդեցություն չունենա, արդեն ավելի խիստ պատժամիջոցների կիրառում:

Իհարկե, այստեղ կարելի է առարկել, որ վերոնշյալ քայլերը կհակասեն ԵՄ շահերին՝ հաշվի առնելով Ադրբեյջանի ունեցած կարևորությունը ԵՄ էներգետիկ անվտանգության համար, սակայն, մեր կարծիքով, այս գործոնի դերը շատ է գերազանցատվում:

Նախ, եթե նույնիսկ այդքան հայտնիություն ստացած և արդեն տապալված «Նաբուկո» ծրագիրը կյանքի կոչվեր և իր ամբողջ կարողությամբ աշխատեր, ապա հաշվի առնելով ԵՄ օգտագործած գազի ծավալները²՝ այն ընդամենը կկարողանար ծածկել միության տարեկան պահանջարկի 6%-ից քիչ ավելին: Բացի այդ, վերջին շրջանում թերթաքարային գազի կատարած հեղափոխությունը էներգակիրների միջազգային շուկայում լրջորեն թուլացնում է «ավանդական» գազի

¹ European Commission, "The EU's Role in Promoting Human Rights and Democratization in Third Countries". Brussels, 8 May 2001, p. 8.

² BP Statistical Review of World Energy, June 2011. http://www.bp.com/liveassets/bp_internet/globalbp/globalbp_uk_english/reports_and_publications/statistical_energy_review_2011/STAGING/local_assets/pdf/natural_gas_section_2011.pdf (Accessed 07 June, 2013).

² BP Statistical Review of World Energy, June 2011. http://www.bp.com/liveassets/bp_internet/globalbp/globalbp_uk_english/reports_and_publications/statistical_energy_review_2011/STAGING/local_assets/pdf/natural_gas_section_2011.pdf (Accessed 05 March, 2013).

ունեցած կարևորությունը: Վերջապես, պարզ տրամաբանությունը պիտի հուշի, որ այնքանով, որքանով սպառողն է կախված արտահանողից, նույն չափով էլ արտահանողն է կախված սպառողից: Եթե ԵՄ-ը շահագրգռված է իրեն էներգակիրներ մատակարարող երկրների դիվերսիֆիկացմամբ, ապա Ադրբեջանն էլ շահագրգռված է իր արտահանման շուկաների դիվերսիֆիկացմամբ: Այսինքն՝ կտրականապես սխալ է ԵՄ-Ադրբեջան էներգետիկ հարաբերությունները դիտարկել առաջինի կախվածությունն երկրորդից պրիզմայով, քանի որ հակադարձ կապը նույնպես գործում է:

Ամփոփում

ԵՄ-ը ԿԱԵ երկրներում հակամարտությունների կարգավորման և կանխարգելման գործում հաջողության է հասել՝ օգտագործելով կառուցողական ներգրավվածության քաղաքականությունը և տարածելով այդ երկրներում եվրոպական արժեքներն ու նորմերը: Կառուցողական ներգրավվածությունը ԵՄ-ն օգտագործում է նաև ԵՀՔ երկրների հետ հարաբերություններում՝ հույս ունենալով արդեն ունեցած դրական փորձը կրկնել այստեղ:

Վերջին շրջանում ԵՄ-ը որոշակի ակտիվություն է ցուցաբերում Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացում: Այս առումով կարևոր զարգացումներից կարելի է համարել «ներգրավվածություն առանց ճանաչման» քաղաքականության կիրառումը, ինչը կարևոր է Լեռնային Ղարաբաղը մեկուսացնելու Ադրբեջանի ջանքերն ի չիք դարձնելու համար: ԵՄ-ն անհրաժեշտ քաղաքական կամք դրսևորելու դեպքում կարող է նաև նպաստել հրադադարի ռեժիմի ամրապնդմանը, մասնավորապես՝ շփման գծում տեղակայելով իր քաղաքացիական դիտորդների առաքելությունը:

Վերոնշյալ զարգացումները կարևորելով հանդերձ՝ պետք է նշենք, որ ընդհանուր առմամբ կարգավորման վրա դրական ազդեցություն ունենալու ԵՄ կարողությունը շատ թույլ է: Միության որդեգրած

կառուցողական ներգրավվածության քաղաքականությունն արդյունավետ չէ, քանի որ դրա հիմքում ընկած ժողովրդավարացում-հակամարտությունների կարգավորում սկզբունքը չի աշխատում: Խնդիրն այն է, որ հակամարտության կողմերից մեկը՝ Ադրբեջանը, հետաքրքրված չէ ԵՄ-ի հետ մերձեցմամբ և դրանից բխող ժողովրդավարացմամբ/Եվրոպականացմամբ ու տրամադրվող օգուտներով: Մինչդեռ կառուցողական ներգրավվածության և դրա գործիքի՝ փոխպայմանավորման տրամաբանությունը հենվում է այն գաղափարի վրա, որ հակամարտող բոլոր կողմերը պետք է շահագրգռված լինեն եվրամերձեցմամբ: Չնայած Ադրբեջանն ընդգրկված է ԵՀՔ և դրա արևելյան չափումը հանդիսացող Արևելյան գործընկերության մեջ, այդ երկիրն ավելի ու ավելի է հեռանում եվրոպական արժեհամակարգից: Ժողովրդավարացման փոխարեն այսօր Ադրբեջանում ամբողջ թափով ամրապնդվում են ավտորիտարիզմի հիմքերը: Այս ամենի արդյունքում, բացի նրանից, որ տապալվում է ԵՄ կառուցողական ներգրավվածության քաղաքականությունը, և ԵՄ-ը չի կարողանում դրական ազդեցություն ունենալ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման վրա, նաև կասկածի տակ է դրվում ամբողջ ԵՄ արտաքին քաղաքականության վստահելիությունը տարածաշրջանում, քանի որ ԵՄ-ը հանդուրժում է ադրբեջանական կողմի ստանձնած պարտավորվածությունների արհամարհումը և եվրոպական արժեքների ոտնահարումը:

Այս պայմաններում ԵՄ քաղաքականության բարեփոխումներից մեկը կարող է լինել բացասական փոխպայմանավորման օգտագործումը, այն է՝ որոշակի սահմանափակումների կամ նույնիսկ պատժամիջոցների կիրառումն Ադրբեջանի հանդեպ: ԵՄ նման ծանրակշիռ միջազգային խաղացողի կողմից կիրառվելիք պատժամիջոցները կբերեն Ադրբեջանի մեկուսացմանը և միջազգային ոչ բարձր հեղինակության էլ ավելի անկմանը, ինչն ադրբեջանական իշխանություններն ամենևին չեն ուզում: Սակայն եթե նույնիսկ նմանատիպ միջոցառումներից հետո Ադրբեջանը չփոխի վարքագիծը, միության

կողմից քաղաքականության վերոնշյալ փոփոխությունը կարևոր քայլ կլինի ԵՄ արտաքին քաղաքականության հայտարարած նպատակների և իրական գործունեության միջև առկա բացը լրացնելու համար:

Հուլիս, 2013թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Hill C.*, “The Capability—Expectations Gap, or Conceptualising Europe’s International Role.” *Journal of Common Market Studies*, Vol. 31, No. 3, 1993.
2. *Treaty on European Union (Consolidated version)*. Luxembourg: Publications Office of the European Union, 2010.
3. *Diez T.*, “Constructing the Self and Changing Others: Reconsidering ‘Normative Power Europe’.” *Millenium Journal of International Studies*, Vol.33 No.3, 2005.
4. *Gat A.*, “The Democratic Peace Theory Reframed: The Impact of Modernity”. *World Politics*, Vol. 58, No. 1, October 2005.
5. *Tocci N.*, “The EU and conflict resolution: promoting peace in the backyard”. London; New York: Routledge, 2007.

НЕЭФФЕКТИВНОСТЬ ЕВРОПЕЙСКОЙ МОДЕЛИ УРЕГУЛИРОВАНИЯ КОНФЛИКТОВ В СЛУЧАЕ НАГОРНО-КАРАБАХСКОЙ ПРОБЛЕМЫ

Ваан Унанян

Резюме

В статье исследуется вопрос эффективности европейской модели урегулирования конфликтов в случае Нагорного Карабаха. Рассматриваются основные элементы и характеристики так называемой политики «конструктивной вовлеченности» ЕС, на которой основывается европейская модель, а также позиция ЕС относительно урегулирования нагорно-карабахской проблемы. Утверждается, что способность ЕС оказывать позитивное влияние на урегулирование существенно ограничена, так как политика «конструктивной вовлеченности» неэффективна, что в свою очередь обусловлено тем, что у одной из сторон конфликта – Азербайджана – нет желания начать реальный процесс европеизации и сближения с ЕС.